

ԿԱՐԳ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող պետական կազմակերպություններում կամ բուհերում (այսուհետ՝ Կազմակերպություն) երիտասարդ գիտնականների դպրոցների (այսուհետ՝ Դպրոց) կազմակերպման համար Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից ֆինանսական աջակցության տրամադրման կարգը:

1. Կազմակերպությունը մինչև ընթացիկ տարվա մարտի 31-ը Կոմիտե է ներկայացնում հաջորդ տարվա ընթացքում նախատեսվող Դպրոցի կազմակերպման համար ֆինանսական աջակցության հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ համաձայն Հավելված 2.1-ի:

2. Կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) իրականացնում է ներկայացված Հայտերի՝ Հավելված 2.1-ին համապատասխանության ստուգում, անհրաժեշտության դեպքում դրանք վերադարձնում է լրամշակման, տասնորյա ժամկետում կազմում է ներկայացված Հայտերի ցանկ:

3. Հայտերի գնահատման նպատակով Կոմիտեի նախագահի հրամանով ստեղծվում է գնահատող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):

4. Յուրաքանչյուր Հայտի համար Հանձնաժողովի անդամները տասնորյա ժամկետում լրացնում են Հայտի գնահատման թերթիկը՝ համաձայն Հավելված N 2.2-ի:

5. Հայտի գնահատականը Հանձնաժողովի անդամների գնահատականների միջին թվաբանականն է:

6. Վարչությունը եռօրյա ժամկետում ձևավորում է վարկանիշային ցանկ Հայտերի գնահատականների նվազման կարգով և ներկայացնում Կոմիտեի նախագահի հաստատմանը:

7. Տվյալ տարվան հաջորդող տարվա ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի ընդունումից հետո Կոմիտեի նախագահը, ելնելով ՀՀ պետական բյուջեով Դպրոցների կազմակերպման համար նախատեսվող հատկացումների չափից, հաստատում է ֆինանսական աջակցության ենթակա Դպրոցների ցանկը և յուրաքանչյուրի

կազմակերպման համար նախատեսվող ֆինանսավորման ծավալը:

8. Կոմիտեն հնգօրյա ժամկետում իր ինտերնետային պաշտոնական կայքում հրապարակում է ֆինանսական աջակցության ենթակա Դպրոցների ցանկը:

9. Դպրոցը սկսվելուց առնվազն քառասուն օր առաջ Կազմակերպությունը Կոմիտեի համաձայնությունը ստանալու համար ներկայացնում է տեղեկատվություն՝ Հայտով նախատեսված որևէ կետում փոփոխություն կատարելու անհրաժեշտության մասին:

10. Դպրոցը սկսվելուց առնվազն երեսուն օր առաջ Կոմիտեի և Կազմակերպության միջև կնքվում է ֆինանսական աջակցության տրամադրման պայմանագիր:

11. Դպրոցի կազմակերպմանն աջակցության համար տրամադրվող ֆինանսական միջոցները Կոմիտեն փոխանցում է Կազմակերպության հաշվեհամարին՝ Դպրոցը սկսվելուց առնվազն քսան օր առաջ:

12. Դպրոցի ավարտից տասնհինգ օր հետո Կազմակերպությունը Կոմիտե է ներկայացնում հաշվետվություն (այսուհետ՝ Հաշվետվություն)՝ համաձայն Հավելված 2.3-ի՝ կից ներկայացնելով Կոմիտեի կողմից տրամադրված ֆինանսական միջոցներով ձեռք բերված ապրանքների և ծառայությունների ծախսերը հավաստող փաստաթղթերի (հաշիվ-ապրանքագրեր, հաշվիչ դրամարկղային կտրոններ, տեղեկանքներ և այլն) պատճենները:

13. Հաշվետվությունները Վարչությունը տրամադրում է Կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (այսուհետ՝ Բաժին)՝ պայմանագրի նախահաշվի հետ ֆինանսական միջոցների ծախսման համապատասխանությունը ստուգելու համար:

14. Բաժինը հայտնաբերված անճշտությունները վերացնելու համար ձեռնարկում է համապատասխան միջոցներ, այնուհետև Հաշվետվություններն ընդունելու մասին հանձնման-ընդունման արձանագրությունները (Հավելված 1.4) ներկայացնում է Կոմիտեի աշխատակազմի ղեկավարի ստորագրությանը:

15. Դպրոց չանցկացնելու, Կոմիտեի միջոցով տրամադրված գումարը չծախսելու կամ ոչ ամբողջությամբ ծախսելու դեպքում Կազմակերպությունը գրավոր տեղեկացնում է Կոմիտեին և չծախսված ֆինանսական միջոցները փոխանցում Կոմիտեի գանձապետական հաշվեհամարին:

ՀԱՅՏ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԴԴՐՈՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Երիտասարդ գիտնականների դպրոցի անվանումը
2. Գիտության բնագավառը
3. Կազմակերպության
 - լրիվ և կրճատ անվանումը
 - հասցեն
 - հեռախոսը
 - էլեկտրոնային փոստի հասցեն
 - ղեկավարի (տնօրեն/ռեկտոր) Ա.Ա.Հ. (լրիվ)
4. Կազմկոմիտեի նախագահի Ա.Ա.Հ. (լրիվ)
5. Անցկացման վայրը, ժամկետները
6. Դասախոսների ընդհանուր թիվը
7. Զարգացած երկրներից հրավիրված դասախոսների թիվը
8. Զարգացող երկրներից հրավիրված դասախոսների թիվը
9. Ունկնդիրների ընդհանուր թիվը
10. Զարգացած երկրներից ունկնդիրների թիվը
11. Զարգացող երկրներից ունկնդիրների թիվը
12. Ֆինանսավորման ընդհանուր ծավալը (թվերով և բառերով)
13. ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեից հայցվող ֆինանսավորման ծավալը (թվերով և բառերով)

Կազմակերպության ղեկավարի ստորագրությունը
Ամսաթիվ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ¹

¹ Ներկայացնել երիտասարդ գիտնականների դպրոցի նպատակները, գիտական հիմնավորումը և կարևորությունը, արդիականությունը, ակնկալվող արդյունքները, կազմակերպիչների վերջին 3 տարիների ձեռքբերումները (գիտական հրապարակումները, պաշտպանված ատենախոսությունները, գիտության նույն բնագավառում կազմակերպված համանման գիտաժողովները և երիտասարդ գիտնականների դպրոցները), ՀՀ-ում երիտասարդ գիտնականների դպրոցի բնագավառի համապատասխան մասնագետների առկայությունը և այլն (մինչև 2 էջ):

ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ

Ը/h	Ա.Ա.Հ.	Քաղաք, երկիր
1.		
2.		
3.		
4.		
5.		
6.		
7.		

ԱՎՆԿԱԼՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՆ ՈՒ ԾԱՎԱԼՆԵՐԸ

Ֆինանսական միջոցների աղբյուրը	Միավոր	Միավորի արժեք	Քանակ	Ընդամենը (հազար դրամ)
Մասնակցության անդամավճար				
ա) մասնակիցներ զարգացած երկրներից	մարդ			
բ) մասնակիցներ զարգացող երկրներից	մարդ			
գ) մասնակիցներ ՀՀ-ից	մարդ			
Օտարերկրյա պետություններից, հովանավորներից կամ միջազգային կազմակերպություններից				
Սեփական միջոցներից				
Այլ աղբյուրներից				
ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեից				

Կազմկոմիտեի նախագահ՝

(ստորագրություն)

(Ա.Ա.Հ.)

ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հ/հ	Ծախսերի անվանում	Միավոր	Միավորի արժեք	Քանակ	Ընդամենը (հազար դրամ)
1.	Հրավիրված դասախոսների գործուղման ծախսեր՝				
	ա) ճանապարհածախս				
	բ) գիշերավարձ	մարդ x օր			
	գ) օրապահիկ	մարդ x օր			
2.	Տրանսպորտային ծախսեր (դիմավորում, ճանապարհում, էքսկուրսիաներ և այլն)				
3.	Դահլիճների և տեխնիկայի վարձակալում	հատ x օր			
4.	Ինտերնետային ծառայությունների հետ կապված ծախսեր				
	ա) կայքի ստեղծում				
	բ) կայքի ապահովում				
5.	Տեղեկատվական նյութերի հրատարակում	հատ			
6.	Պաստառների տպագրում	հատ			
7.	Զեկույցների սեղմագրերի հրատարակում	հատ			
8.	Զեկույցների հրատարակում	հատ			
9.	Գրենական պիտույքներ				
	ա) սյուրսակ				
	բ) նոթատետր				
	գ) գրիչ				
10.	Տնտեսական ծախսեր (ապրանքներ)				
	Կազմտեխնիկա				
	ա) համակարգիչ				
	բ) փայիչ				
11.	գ) սկաներ				
	դ) պրոյեկտոր				
	Ներկայացուցչական ծախսեր				
	ա) ընդունելություն				
12.	բ) բանկեթ				
	գ) հանդիսավոր միջոցառումներ				
	դ) փակման արարողություն				
	Սուրճի ընդմիջումների ծախսեր				
13.	Մշակութային միջոցառումներ				
14.	Մշակութային միջոցառումներ				
15.	Չնախատեսված ծախսեր				
16.	Կազմակերպման և անցկացման աշխատանքների մեջ ներգրավվածների վարձատրություն				
17.	Ընդամենը				
18.	ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեից հայցվող գումարը				

Կազմակերպության ղեկավար՝ _____

(ստորագրություն)

(Ա.Ա.Հ.)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____

(ստորագրություն)

(Ա.Ա.Հ.)

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԴՊՐՈՑԻ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Երիտասարդ գիտնականների դպրոցի անվանումը _____

Հ/հ	Չափորոշիչներ	Գնահատական	
		Առավելագույն	Վերջնական
1.	Դասախոսների կազմը		
1.1	50%-ից պակասը զարգացող երկրներից են կամ միայն ՀՀ-ից	2	
1.2	50%-ից ավելին զարգացող երկրներից են, իսկ զարգացած երկրների ներկայացուցիչները սակավաթիվ են	3	
1.3	50%-ից ավելին ներկայացնում են զարգացած երկրներ	5	
2.	Ունկնդիրների կազմը		
2.1	50%-ից պակասը զարգացող երկրներից են կամ միայն ՀՀ-ից	2	
2.2	50%-ից ավելին զարգացող երկրներից են, իսկ զարգացած երկրների ներկայացուցիչները սակավաթիվ են	3	
2.3	50%-ից ավելին ներկայացնում են զարգացած երկրներ	5	
3.	Համապատասխան գիտական դպրոցը Հայաստանի Հանրապետությունում		
3.1	Գիտական ուղղությունն ունի հանրապետական նշանակություն կամ ՀՀ-ում նոր է ձևավորվում	2	
3.2	ՀՀ-ում գիտական ուղղության ներկայացուցիչներն ունեն միջազգային առաջատար մասնագետների շարքերում ընդգրկվելու մեծ հավանականություն	3	
3.3	ՀՀ-ում գիտական ուղղության ներկայացուցիչները միջազգային առաջատար մասնագետների շարքերում են	5	
4.	Միջազգային համագործակցությանը նպաստելու աստիճանը		
4.1	Նախատեսվում է միայն ներպետական կամ տարածաշրջանային համագործակցություն	2	
4.2	Նպաստում է միջազգային համագործակցություն հիմնելուն	3	
4.3	Զարգացնում է գոյություն ունեցող միջազգային համագործակցությունը	5	
Ընդհանուր գնահատականը		20	

Գնահատող՝ _____

(ստորագրություն)

(Ա.Ա.Հ.)

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԴՊՐՈՑԻ**

1. Երիտասարդ գիտնականների դպրոցի անվանումը
2. Գիտության բնագավառը
3. Կազմակերպության
 - լրիվ և կրճատ անվանումը
 - հասցեն
 - հեռախոսը
 - էլեկտրոնային փոստի հասցեն
4. Կազմկոմիտեի նախագահի Ա.Ա.Հ. (լրիվ)
5. Անցկացման վայրը, ժամկետները
6. Մասնակիցների փաստացի թիվը
7. Զարգացած երկրներից մասնակիցների փաստացի թիվը
8. Զարգացող երկրներից մասնակիցների փաստացի թիվը
9. ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորման ծավալը (թվերով և բառերով)

Կազմակերպության ղեկավարի ստորագրությունը
Ամսաթիվ

Կ. Տ.

ՏՎՅԱԼՆԵՐ
ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԱՍԻՆ

1. Ա.Ա.Հ. (լրիվ)
2. Ծննդյան ամսաթիվը (օր, ամիս, տարի)
3. Գիտական աստիճանը
4. Գիտական կոչումը
5. Աշխատանքի վայրը
6. Պաշտոնը
7. Գիտական հրապակումների ընդհանուր թիվը (առանց զեկույցների, թեզիսների)
8. Հասցեն
9. Հեռախոսը
10. Էլեկտրոնային հասցեն

Կազմկոմիտեի նախագահի ստորագրությունը

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՄՓՈՓՈԳԻՐ

1. Կազմկոմիտեի կազմը
2. Գիտական ծրագիրը
3. Դասախոսությունների կամ զեկույցների թեզիսների մասին մատենագիտական տվյալներ (անվանումը, հրատարակման տարին, հրատարակչությունը և այլն)
4. Թեմատիկայի վերլուծական ակնարկ (10 էջից ոչ ավելի)
5. Երիտասարդ գիտնականների դպրոցի որոշումը (առկայության դեպքում)

Կազմկոմիտեի նախագահի ստորագրությունը

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԴՊՐՈՑԻ**

Հ/հ	Ծախսերի անվանում	Միավոր	Միավորի արժեք	Քանակ	Ընդամենը (հազար դրամ)
1.	Հրավիրված դասախոսների գործուղման ծախսեր՝				
	ա) ճանապարհածախս				
	բ) գիշերավարձ	մարդ x օր			
	գ) օրապահիկ	մարդ x օր			
2.	Տրանսպորտային ծախսեր (դիմավորում, ճանապարհում, էքսկուրսիաներ և այլն)				
3.	Դահլիճների և տեխնիկայի վարձակալում	հատ x օր			
4.	Ինտերնետային ծառայությունների հետ կապված ծախսեր				
	ա) կայքի սպեղծում				
	բ) կապի ապահովում				
5.	Տեղեկատվական նյութերի հրապարակում	հատ			
6.	Պաստառների տպագրում	հատ			
7.	Զեկույցների սեղմագրերի հրատարակում	հատ			
8.	Զեկույցների հրատարակում	հատ			
9.	Գրենական պիտույքներ				
	ա) պայուսակ				
	բ) նոթապետեր				
	գ) գրիչ				
	դ) կրծքանշան (badge)				
10.	Տնտեսական ծախսեր (ապրանքներ)				
11.	Կազմտեխնիկա				
	ա) համակարգիչ				
	բ) տպիչ				
	գ) սկաներ				
	դ) պրոյեկտոր				
12.	Ներկայացուցչական ծախսեր				
	ա) ընդունելություն				
	բ) բանկետ				
	գ) հանդիսավոր միջոցառումներ				
	դ) փակման արարողություն				
13.	Սուրճի ընդմիջումների ծախսեր	մարդ x օր			
14.	Մշակութային միջոցառումներ				
15.	Չնախատեսված ծախսեր				
16.	Կազմակերպման և անցկացման աշխատանքների մեջ ներգրավվածների վարձատրություն				
17.	Ընդամենը				
18.	ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի կողմից հատկացված գումարը				

Կազմկոմիտեի նախագահ՝ _____ (ստորագրություն) _____ (Ա.Ա.Հ.)

Կազմակերպության ղեկավար՝ _____ (ստորագրություն) _____ (Ա.Ա.Հ.)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) _____ (Ա.Ա.Հ.)

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԴՊՐՈՑԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» _____ 20 թ.

Կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանի և Կազմակերպությունը, ի դեմս տնօրեն/ռեկտոր _____-ի, հիմք ընդունելով, որ երիտասարդ գիտնականների դպրոցի կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման N _____ պայմանագրի նախահաշվով նախատեսված ապրանքների և ծառայությունների ծախսերը համապատասխանում են Կոմիտեի կողմից տրամադրված ֆինանսական միջոցներին, կազմեցին սույն արձանագրությունն այն մասին, որ Կողմերը ամբողջությամբ իրականացրել են պայմանագրով իրենց վրա դրված պարտավորությունները:

Երիտասարդ գիտնականների դպրոցի հաշվետվությունը հանդիսանում է սույն արձանագրության բաղկացուցիչ մասը:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	ԿՈՄԻՏԵ
Տնօրեն/ռեկտոր _____ (ստորագրություն) _____	Գլխավոր քարտուղար՝ _____ (ստորագրություն) ԼԵՎՈՆ ՄԱՐԴՈՅԱՆ
Կ.Տ.	Կ.Տ.